ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում

Իրականացման ժամանակահատված: 01.01.2019 - 28.02.2023

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 680 000

Ընդհանուր բյուջե: € 850 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

Council of Europe

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ: facebook.com/partnership governance, https://twitter.com/CoeEapPCF

Նախագծի կայքէջ: partnership-governance2-eu.coe.int

Նախագծի նկարագրություն: «Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի և կանխարգելման ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում» ծրագիրը Եվրոպական միության/Եվրոպայի խորհրդի (ԵՄ/ԵԽ) Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ) ծրագրային ձևաչափի երկրորդ փուլի 6 ծրագրերից մեկն է, որն ուղղված է տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի գործում Արևելյան գործընկերության երկրների սատարմանը: Ծրագրի նպատակն է աջակցել երկրում հակակոռուպցիոն բարեփոխումներին՝ անդրադառնալով կոռուպցիայի և փողերի լվացման հարցերը մշտադիտարկող Եվրոպայի խորհրդի մարմինների կողմից բարձրացված խնդիրներին: Ծրագիրը կոչված է նաև խթանել ԵՄ 2020 թիրախային արդյունքների իրականացումը, որոնք սահմանված են «Օրենքի գերակայության և հակակոռուպցիոն մեխանիզմների ամրապնդում» առաջնահերթ ոլորտներում և փոխկապակցված է ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի 2019-2022 թթ. հայաստանյան գործողությունների ծրագրի հետ:

Ակնկալվող արդյունքներ:

- Կոռուպցիայի դեմ պայքարի բարելավված օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ՝ անկախ և արդյունավետ հակակոռուպցիոն մարմինների առկայությամբ
- Գույքի հայտարարագրման, շահերի բախման և ապօրինի հարստացման կանխման բարելավված համակարգ
- Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունավետության բարձրացում
- Ապօրինի ձեռքբերված գույքի վերադարձման ինստիտուցիոնալ մեխանիզմների զարգացում: